վիրջանալ, սաղ աշխարքը լուսաւորուեցաւ,
համա դուք էլի ձիրնիք քշում. կուլի Ալէք-
սէլ Ստեփանիչը Աննա Պետրովնալին շատէ
դուր գալի:

Բ. ՏԻԿԻՆ

Վուր դուր է գալի՝ պիտք է սիրէ, էլի:

Ե. ՏԻԿԻՆ

Ի՞նչ անինք. հիմի ամեն տիզ էլ լու-
սաւորութին է (զնում՝ են):

ԼԵՒՈՆ ՄԻՒԱՅԻՉ

(Դուրս գալով դահլիճից) Աւելի լաւ է
հեռանալ (դիմելով դէպի նախասենեակ),
ընդ միշտ հեռանալ այստեղից (կանգնելով).
Երեկի ինձ վիճակուած է թափառել շարու-
նակ. բայց տեելի լաւ է թափառական կեան-
քը քան մենակութիւնը (զնալով դէպի նա-
խասենեակ). Հաշտուել ալս մարգկանց հետ
անկարելի է (նախասենեակում շտապով
հազնուում է եւ զնում):

Դահլիճից դուրս են զայի Աննա Պետ-
րովնան, Ալէքսէլ Ստեփանիչը, Սոլյոն
Լուկիանիչը ու դիմում են դէպի պատուհա-
նի կողմը:

ՍՈԼՈՄՈՆ ԼՈՒԿԵԱՆԻՉ

Հա՛, հա՛, հա՛, (բարցրաձայն ծիծաղե-

ՀԻՒԲԱ ԱԽԵՏՈՎՆԱԾ

Վալս շատ եմ սիրում, կարծես օդի մէջն
եմ սլանում...»

Դուքս են զալիս վաճառականները եւ
հիւրերը ու ամենքը խառն հաւաքում են
սեղանի մօտ:

ԱԽԵՏՈՎՆԱԾ

Մինաս, աբա, հիմի նստինք (սկսում են
նստողեր), էլ ի՞նչ ասիլ կուզիս, դուն գի-
գիս, ի՞նչ հանգի թաժադութին կօնիս (նա-
խասենեակից մոնում են զունաշիք եւ նս-
տում են դուն մօտ):

ՄԻՒԾԱԾ

(Թենգերը ուսերի վրայ զցելով դառ-
նում է զունաշիներին) Աբա, տղերք ջան,
թէ ձիր Աստուծը կու սիրեք, մէ քաղցր բայ-
եաթի ածէք:

Զունաշիքը սկսում են ածել:

ՄԻՒԾԱԾ

(Վերցնում է բաժակը եւ դառնում է
հարեւանին). Մէ գէսը գինի ածա (հարեւա-
նը սկսում է ածել). ախը ի՞նչ լազաթ կայ
էն սուփրում, ուր դափ-զուռնէն չի ածում
ու տուշ, տուշ, չին կանչում մինձ ու
պստիկ միասին...

ՀԻՒՐԵՐ

(Խառն) բըաւօ, բըաւօ, ձեր կենացը,

բարով կառավարես, բարով կառավարես.
տուշ, տուշ, տուշ...

Դուլուկն ածում է տուշ եւ բաժակնե-
րը դատարկում են:

ՄԻՒԾԱԾ

Ղուրթ է պառվիլ իմ, մազիըս գիփ
սիպտկիլ է, համա 'ես ձիր խաթըրը չիմ կոտրի
(ղառնում է զունաշիներին). ածէք, տղերք
ջան, ածէք. դուք կուլ էստի չլիք, էս սուփ-
րումը ի՞նչ լազաթ կուլի. ածէք տղերք ջան.
ածէք:

Զունաշիքը սկսում են ածել:

ՄԻՒԾԱԾ

Խմինք, (բաժակը բարձրացնելով) Աւեա
Աւետիչի կինացը. 'ես ու իմ հոգին՝ շատ լաւ
մարդ է միզ համա. թող անպակաս ըլին միր
մէջը սրա նման մարդիկ. միք ասի թէ ցի-
լինդը ունի ծածկած, եա թէ չէ մօդնի զուր
ունէ հագին, սատանի պոչով. միր հայ մար-
դի ադաթն է մոռանաչ իր հին կաբան, մո-
ռանալ իր լեզուն ու իր կրօն, համա միք
մոռանայ, քաղցի մարդ է, միր հայ խալիսին
լաւ ծանօթ, դիփ ամենքը գիդին, մինձացիլ
է Օթաճալում...

ՀԻՒՐԵՐ

Տուշ, տուշ, տուշ...

Դուլուկը ածում է տուշ եւ բաժակնե-
րը դատարկում են:

ՄԻՒԱՍ

(Բաժակը բարձրացնելով) Ես էլ խը-
մինք Թաթթոս Իվանիչի կինացը ու խնդրինք
Աստծուց, վուր Աւետ Աւետիչը ու Թաթթոս
Իվանիչը մինչև մահը բարեկամ մնան, Աս-
տուձ վուչ հասցնէ էն օրը, վուր միմեանց
միսն ուտին հայու նման:

ՀԻՒՐԵՐ

Տո՛ւշ, տո՛ւշ, տո՛ւշ...

Դուդուկն ածում է տուշ եւ բաժակնե-
րը դատարկում են:

ՄԻՒԱՍ

(Բաժամը բարձրացնելով) Ես էլ Աղամ
Մաթվէիչի կինացը, վուր միր խաթըը չը
կոտրից, միզ բէդամաղ չարաւ, Աստուձ էն
միտքը տայ, էն կարողութինը, վուր մինք
չամանչինք ուրիշների առաջ...

ՍԵՐԳԻԵՑ ՍԵՐԳԻԵՑ

(Բաժակը բարձրացնելով) Եկատրա, ե-
րեք դերեկտօրի կենացը, ուռան...

Աւետ Աւետիչը, Թաթթոս Իվանիչը եւ
Աղամ Սալմէիչը բաժակները ձեռին ոտի
են կանգնում:

ՀԻՒՐԵՐ

(Խառն) Աղամ Մաթվէիչի, Թաթթոս Իվա-
նիչ, Թաթթոս Իվանիչ, Աւետ Աւետիչ, Աւետ
Աւետիչ, Աղամ Մաթվէիչ:

Դուդուկն ածում է տուշ եւ բաժակ-
ները դատարկում են:

Մինասը ոտի կանգնած՝ բաժակը ձե-
ռին սկսում է «մոաւայ ժամի», մի քանիս
ները ծայնակցում են եւ մի տուն երգում.
Երգը վերջացնելուն պէս ծառան բե-
րում է թազա ծուկը եւ դնում է Մինասի
առաջ:

ՄԻՒԱՍ

(Չուկը վերցնելով) Շատ տեղերումն
իմ էլի, շատ տեղերում քէֆ տեսի, համա-
եսպէս լազաթին վունց մէ տիզ չիմ քէֆ
արի. աբա մէ գէսը թամաշա արէք, (ձուկը
բարձրացնելով) կէս ստհաթ առաջ, խիզճը
խտակ ջրում, ուրախ, ուրախ, լող էր տալի
գէս ու դէն, համա ձգնապանը սառը քամու
առաջ, կէս գիշերին, բորլիկ վուտով, ըռնում
է իր գամբով ձգնապանի անունը զուրթ է
կինտօ է, համա նրանց մէջը խճմտանք ու
նամուս կա! (ըստակը բարձրացնելով). էս
էլ խմինք էն մարդու կինացը, վուր ուրիշին
չի զբնի, հալալ ճակտի քըտինքով կու
ապրէ...

ՀԻՒՐԵՐ

Տո՛ւշ, տո՛ւշ տո՛ւշ...

Դուդուկն սկսում է ածել տուշ:

ՀԻՒՐԵՐ

Լեզգինկա, լեզգինկա, (մի քանիսները
ծափ տալով) լեզգինկա...

Դուդուկն ածում է լեզգինկա. Ալէք-
սէյ Ստեփանիշը մօտենում է Մինասին,
դուրս է զերում տեղից. Մինասը սկը-
սում է պարել, ամենքը ծափ են տա-
լիս եւ վարագոյրն էլ կամաց կամաց հջ-
նում է:

(Վ Ա Ր Ա Գ Ո Յ Բ Ր)

ԵՐՐՈՐԴ ԵՐՍՐՈՒԾՃ

(Մի տարի անցած)

Դահլիճ. Նոյն կահաւրութիւն ինչ որ
առաջին արարուածի մէջ. Լիւբա Աւետով-
նայի առանձնասենեակի դուռը բաց է:

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՎՆԱ

(Դուրս գալով սեղանատնից) Դարձեալ
եր խօսքը չը կատարեց (նայում է դէպի նա-
խասենեակ), դարձեալ ուշացաւ (մօտենում է
դաշնամուրին). Ախ, տէր Աստուած (սկսում
է թերթել տետրակը. թերթելու ժամանակ
նստում է, մի քանի անգամ կլաւիշներին
խիում, նորից սկսում է թերթել):

ԼԻՒՐԸ ԱԽԵՏՈՎՆԱ

(Առանձնասենեակից, ինքը չէ երեսում)
Ալ, այս ըոպէիս վերջացնում եմ, արդէն
հագայ, մազերս է մնացել...

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՎՆԱ

Երանի քեզ, հագնուելու ժամանակ ես
գտել:

ՀԻՒԲԱ ԱԽԵՏՈՎՆԱՆ

Ի՞նչ ես ասում մալրիկ, գուցէ վատ է կարած:

Աննա Պետրովնան խփում է կլաւիշներին. ուզում է սկսել մի եղանակ, բայց թռինում է կիսատ եւ նորից թերթում է տետրակը:

ՀԻՒԲԱ ԱԽԵՏՈՎՆԱՆ

Վերջացնում եմ մալրիկ, քիչ է մնացել ալժմ կարմիր ժապաւէնն եմ կապում, որ տեսնես ի՞նչպէս է սազում, չես կարող երեւակայել որքան գեղեցիկ եմ երեռւմ:

Աննա Պետրովնան խփում է դաշնամուրին եւ սկսում է նուագել մի եղանակ. յանկարծ Լիւբա Աւետովնան դրւս է վազում առանձնասեննակից սպիտակ դերեայլ, հերարձակ եւ գլխին կարմիր ժապաւէն կապած:

ՀԻՒԲԱ ԱԽԵՏՈՎՆԱՆ

Սազում է չէ մալրիկ. (առաջը չոքելով) վազը երեկոյեան ժողովարանում որքան գեղեցիկ և գրաւէչ կը լինեմ, մանաւանդ էլեքտրականլոյսի տակ. ախ մալրիկ, որքան ուրախանում եմ, որքան հապարտ եմ զգում ինձ, երբ ամենքը ինձ են նայում. որ կողմ նայում եմ, ամեն կողմ կոմպլիմենտներ, շարունակ կոմպլիմենտներ եմ լսում. որքան երջանիկ եմ զգում ինձ, որքան լաւ է գեղեցիկ լինել, չէ մալրիկ (երկուսն էլ վեր են կենում):

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՎՆԱՆ

Այո, (Լիւբայի մազերը ուղղելով) գու գեղեցիկ ես:

ՀԻՒԲԱ ԱԽԵՏՈՎՆԱՆ

Գիտես մալրիկ, մենք կը գնանք ամարանոց, ամբողջ երեք ամիս կը հանգստանենք, իսկ սեպտեմբերին կը գանք, մի լաւ հարսանիք կանենք. յետոյ տուն կը վարձեմ, կահարասիք, քաղկաթոռներ, տիթոռներ, սեղաններ, դաշնամուր, բոլորը, բոլորը կառնեմ. (փաթաթուելով մօրը) մալրիկ, (համբուրում է) որ գիտենաս թէ ես նամակը ինչպէս գողալով բաց արի. Ես զգում էի, որ արդէն վերջնական բան պէտք է լինի գրած:

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՎՆԱՆ

Բայց ի՞նչու ինձ, վերջապէս հօրդ ոչինչ չէ ասում, չէ որ պարտաւոր է յայտնել իւր մտադրութիւնը...

ՄԱՐԹԱ

(Նախասենեակից ներս վազելով) Գիտէք ի՞նչ, նորութիւն, նորութիւն (շունչը կտրում է):

ՀԻՒԲԱ ԱԽԵՏՈՎՆԱՆ

Դէհ, շուտ, ասա ի՞նչ է:

ՄԱՐԹԱ

Նիկիտ Սերգէիչը Փրակով և բարձր ցիլինդր ծածկած գալիս է մեր տան կողմ:

ՀԻՒԲԱ ԱԽԵՏՈՎՆԱՆ

ԴԵՇ, ԷԼ Բ'ՆՀ ԵՍ ԿԱՆԳՆԵԼ, ԳՆԱ, ՉՈՒԹՈՎ
ԴՈՒՐԸ Բաց արտ:

ՄԱՐԹԱ

Այս ըոպէիս (զնում է դէպի նախասե-
նեակ, նախասենեակի խորքում երեւում է
Նիկիտ Սերգէիչը): Ահա, արդէն գալիս է
(դուրս է զնում):

ՆԻԿԻՏ ՍԵՐԳԻԿԻ

Բարեւ ձեզ (մտնելով դահլիճ), բարեւ
մարիկ (ծեռքը համբուրում է), անսպասելի
էր իմ գալը. բարեւ ձեզ Լիւբա Աւետովնա-
(նոյնպէս ծեռքը համբուրում է) հագնուել
էք, երեւի ուրիշ տեղ էք գնում, ես խան-
գարեցի:

ՀԻՒԲԱ ԱԽԵՏՈՎՆԱՆ

ՄԵՆՔ ՈՅ մի տեղ չենք գնում. այս դե-
րեան մի ժամ առաջ բերին, հագայ որ
տեսնեմ ինչպէս է կարած և յանկարծ դուք
ես եկաք:

ՆԻԿԻՏ ՍԵՐԳԻԿԻ

Հրաշալի է կարած, ինչպէս սակում է:

ՀԻՒԲԱ ԱԽԵՏՈՎՆԱՆ

Խնդրեմ նստեցէք (ուրախացած տալիս
է աթոռ եւ ամենքը նստում են):

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՎՆԱՆ

Ենորհաւորում եմ, ուստանողական հա-

գուստը հանել էք, ուրեմն վերջացրել էք
ուսումը և Պետերբուրգ այլ ես չէք գնալու:
ՆԻԿԻՏ ՍԵՐԳԻԿԻ

Ո՛չ, էլ ինչու համար պէտք է գնամ.
ի հարկէ, այժմ կը գնամ ամարանոց, ճանա-
պարհորդութիւններ կանեմ, կը հանգստանամ,
իսկ սեպտեմբերին կը գամ Տփխիս և կը սկը-
սեմ հիւանդների ընդունելութիւնը:

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՎՆԱՆ

Դուք միւս նորաւարտ բժիշկների նման
չէք, որոնք տուն տեղ չունենալու պատճա-
ռով մի առ ժամանակ մնում են անյալտու-
թեան մէջ և կամ թէ գնում են քաղաքալին
հիւանդանոցները մի քանի կոպէկ ստանալու
համար. ձեզ կարելի է նախանձել. անցեալ
օրը ձեր հալրը ասում էք, որ ուզում է ձիաներ
առնել...

ՆԻԿԻՏ ՍԵՐԳԻԿԻ

Բայց ես չը թողի. ինչ կարիք կայ այս
ըոպէիս առնել, միենոյն է, ես երեք ամիս
այստեղ չեմ լինելու, իսկ սեպտեմբերին ան-
պատճառ հարկաւոր է, առանց կառքի շատ
դժուար է ինձ համար:

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՎՆԱՆ

Ուրեմն դուք բոլորովին չէք գնալու
Պետերբուրգ:

ՆԻԿԻՏ ՍԵՐԳԻԿԻ

Ես վճռել եմ մնալ այստեղ:

ԼԻՒԲԱ ԱԽԵՏՈՎՆԱՆ

(Զարմանալով) Վճռել էք արդէն:
ՆԻԿԻՏ ՍԵՐԳԻԿԻ

Ինչու էք այդպէս զարմանում:

ԼԻՒԲԱ ԱԽԵՏՈՎՆԱՆ

Որովհետև նոքա, որոնք սովորում են
մեծ քաղաքների կեանքին, այլ ևս չեն կա-
րողանում յետ ընկած քաղաքներում ապրել:

ԱՆՍԱ ՊԵՏՐՈՎՆԱՆ

Շատ պարզ է, վերցնենք օրինակ հէնց
Տփխիսը և Տփխիսի հետ համեմատենք մի
փոքրիկ գիւղաքաղաք, չե՞ որ այստեղի կեան-
քը բոլորովին ուրիշ է, այստեղ տւելի կեն-
դանութիւն կար, այստեղ մարդս զգում է
ոռ ապրում է, իսկ գիւղաքաղաքում կտտա-
րեալ մեռելութիւն է:

ԼԻՒԲԱ ԱԽԵՏՈՎՆԱՆ

Եթէ ինձ մէկը ասի, թէ ես քեզ համար
գիւղում պալատներ կը շինեմ, կառքեր, ձիա-
ներ, բոլորը, բոլորը կառնեմ, կը պահեմ
ինչպէս թագուհի, ես դարձեալ չեմ համա-
ձայնուի:

ՆԻԿԻՏ ՍԵՐԳԻԿԻ

Լիւբա Աւետովնա, շատ ճիշտ էք դա-
տում. դուք ծնուել էք այստեղ, այստեղ էք
մեծացել. անկասկած ամեն մարդ սիրում է
իր ծննդավայրը:

ԼԻՒԲԱ ԱԽԵՏՈՎՆԱՆ

Իմ ծննդավայրը և իմ հոյրենիքս այն-
տեղ է, որտեղ ինձ համար լաւ է:
ՆԻԿԻՏ ՍԵՐԳԻԿԻ

Այդ ինքն ըստ ինքեան այդպէս է, պարզ
է որ եթէ օրինակ ես՝ հնարաւորութիւն ու-
նենալի Փարիզում ապրել, այն ժամանակ
այստեղ չէի ապրի:

ԱՆՍԱ ՊԵՏՐՈՎՆԱՆ

Որքան լաւ է Փարիզում ապրել. այն
ժամանակ մարդ ստիպուած չի լինի ամբողջ
շաբաթներ դէս ու դէս ընկնել մի դերեա կա-
րուել տալու համար. այստեղի կար անողները կար-
ծում էք որևէ բան հասկանում են. երեա-
կալեցէք, որքան չարչարուեցի, հոգիս գուրս
եկաւ, մինչև այս դերեան (Հիւրա Աւետովնայի
հագածը ցոյց տալով) կարել տուի:

ԼԻՒԲԱ ԱԽԵՏՈՎՆԱՆ

Մենք շատ լաւ կար անող ունինք. այն-
քան բարի, այնքան բարի, որ չեմ կարող ա-
սել, այս դերեաս անցեալ շաբաթ պատրաստ
էր, բայց ուսերը շատ լայն էր կարել և քան-
դել տուինք:

ԱՆՍԱ ՊԵՏՐՈՎՆԱՆ

Բացի ուսերից կուրծքն էլ վատ էր:

ԼԻՒԲԱ ԱԽԵՏՈՎՆԱՆ

Ի հարկէ մայրիկ, այդպէս կը լինի, երբ

որ ուսերը լայն է, կուրծքն էլ վատ է լինում:

Նախասենեակից մտնում է Ալէքսէյ Ստեփանիչը պօրտֆէլով:

ԱԼԷՔՍԻՑ ՍՏԵՓԱՆԻՑ

Ա՛, բարե ձեզ, բարե, բարե (ամենքի ծեռքը առնում է). այսօր ամենքիդ փոխուած եմ տեսնում:

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՎՆԱ

(Վիրաւորուած) Եթէ զուք երկու ժամ առաջ գալիք, փոխուած չէիք տեսնի:

ԱԼԷՔՍԻՑ ՍՏԵՓԱՆԻՑ

Այս, ճիշտ էք ասում (պօրտֆէլը դնում է դաշնամուրի վրայ) Սնսա Պետրովնա. Երեխ շուտով ամարանոց կը գնաք:

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՎՆԱ

Ես արդէն պատրաստութիւն եմ տեսնում, մենք շուտով կը գնանք...

ԱԼԷՔՍԻՑ ՍՏԵՓԱՆԻՑ

(Նստելով) Դուք շուտով կը լինէք ամարանոցում, իսկ մեզ նման գործի մարդիկ զրկուած են լինում ալդպիսի բաւականութիւնից:

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՎՆԱ

Ես իսկապէս խղճում եմ ձեզ. Աւետ Աւետիչն էլ ամբողջ ամառը մնալու է այստեղ:

ԱԼԷՔՍԻՑ ՍՏԵՓԱՆԻՑ

Մենք շատ ենք զբաղուած, սակայն եսմի մի անգամ կայցելեմ ձեզ: ՀԻՒԲԱ ԱԻԵՏՈՎՆԱ

Նիկիտ Սերգէիչն էլ կը գայ: ԱԼԷՔՍԻՑ ՍՏԵՓԱՆԻՑ

Նիկիտ Սերգէիչը ազատ մարդ է, աւելի յաճախ կարող է լինել, քան ես:

ՀԻՒԲԱ ԱԻԵՏՈՎՆԱ

Այս ամառ մենք շատ լաւ ժամանակ կանցկացնենք, եթէ մեզ չէք մոռանալ և յաճախ կայցելէք:

ՆԻԿԻՏ ՍԵՐԳԻԿԻ

Օ՛, ալնքան յաճախ գամ, որ գուցէ և զգուէք ինձանից:

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՎՆԱ

Ի՞նչ էք ասում Նիկիտ Սերգէիչ:

ՀԻՒԲԱ ԱԻԵՏՈՎՆԱ

Ուզում է որ մենք աւելի շատ խնդրենք: ԱՆՆԱ ՊԵՏՐՈՎՆԱ

Նաւթալին գործը Աւետ Աւետիչին շատ է զբաղեցնում, բոլորովին հանգստութիւն չունի. անցեալ օրը խնդրեցի, որ գայ ամարանոց, հանգստանալ, բայց մերժեց:

ԱԼՔԾԵՑ ՍՏԵՓԱՆԻՑ

Ալգպէս էլ հարկաւոր է, (խորամանկ հայեացք ծգելով Աննա Պետրովնայի վրայ) որովհետև նաւթափն գործը զեկավարել հեշտ չէ, թէև Սւետ Աւետիչի բայց կայութիւնը ձեզ համար զգալի կը լինի, բայց ինչ արած. ը... իսկ ո՞րտեղ էք գնալու:

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՎՆԱ

Գնալու ենք Բաթումի մօտ, սեպհական ամարանոց:

ԱԼՔԾԵՑ ՍՏԵՓԱՆԻՑ

Ամառ ժամանակ, ծովի ափին, օ, շատ հրաշալի է, մանաւանդ երբոր մարդ տխուր է լինում:

Աննա Պետրովնան նստած լինելով դաշնամուրի մօտ, յանկարծ խիում է կաւիշ ներին եւ անորոշ ճայներ հանում:

ԱԼՔԾԵՑ ՍՏԵՓԱՆԻՑ

Աննա Պետրովնա, եթէ կարելի է, խնդրում եմ, ի՞նչու էք այդպիսի աններդաշնակ ձայներ հանել տալի, նուագեցէք մի բան:

Աննա Պետրովնան ուժգին խիմելով մատները սկսում է նուազել՝ հետզհետէ ոգետրությով:

ԱԻԵՏ ԱԻԵՏԻ

(Յանկարծ մտնում է նախասեննակից

եւ դառնալով դէպի Ալէքսէյ Ստեփանիչը՝ Եկեղիս էստի մասլահաթ իս անում...)

Աննա Պետրովնան նուազելը ընդհատում է եւ բարկացած դաշնամուրը փակում:

ԱԻԵՏ ԱԻԵՏԻ

Մինք էնդի քիզ սպասում ինք...

Նախասեննակից մտնում են Մանեան եւ Օլեան գորեսով:

ՕԼԵԱ

Ուրախացնեմ հը՝, ես փոխեցի երկրորդը:
ՄԱՆԵԱ

Իսկ ես երրորդը:

ՕԼԵԱ

(Մօտենայով հօրը) Ժամացուցները երբ կը ստանանք, հը:

ԱԻԵՏ ԱԻԵՏԻ

(Բարկացած) Հա՛, լաւ, լաւ գնացէք:

Մանեան եւ Օլեան վիրաւորուած անցնում են աջ պատի կողմ:

ԱԼՔԾԵՑ ՍՏԵՓԱՆԻՑ

(Ժամացոյցին նայելով վեր է կենում) Ժամի մէկն է, ես կարծում էի (ալօրտֆէլը վերցնում է), որ ձեզ տանը կը գտնեմ...

Երկուան էլ դիմիւմ են դէպի նախասեննեակ:

ԱԻԵՏ ԱԻԵՏԻԶ

Մինք էնդի քիզ սպասում ինք, դուն
էկիլ իս էստի... (դուրս են գնում):

ՄԱՐԹԱ

(Դուրս գալով սեղանատնից) Սուրճը
պատրաստ է համեցէք:

Հիւրա Աւետովնան, Նիկիտ Շնբաէիշը
եւ Աննա Պետրովնան մտնում են սեղանա-
տուն:

ՕԼԵԱ

Մեզ հայրիկը բոլորովին չի սիրում:

ՄԱՆԵԱ

Մեզ ոչ հայրիկն է սիրում և ոչ մայ-
րիկը...

(Վ Ա Ր Ա Գ Ո Յ Բ Ր)

ԶՈՐՐՈՐԴ ԱՐԵՐՈՒԱԾ

Երեկոյեան ժամի 6-ն է. բեմի խորքում
երեւում է ծովը, աշ կողմում՝ տան մի
մասը պատռնաներով եւ մի դոնով. ամ-
բողջ ափը ծածկուած է խիտ ծառերով,
միայն տան առաջ փոքրիկ բաց տարածու-
թին կայ եւ ծովի ափով անցնում է ճա-
նապարհ: Հեռուից լսում է երաժշտութին,
տան մօտ ծափ տակը դրած է սեղան. շուր-
ջը նատած են Աւետ Աւետիշը, Թաթոս Իվանի-
շը, Աղամ Մաթվէիշը, Ալէքսէյ Ստեփանիշը
ու Սոլոմոն Լուկեանիշը. ամենքի առաջ դար-
սած է դատարկ թէյի բաժակները. Հինց որ
վարագոյրը բարձրանում է, ամենքը աթոռնե-
րը ետ քաշելով վեր են կենում:

ԱԼԵՔՍԻՑ ՍՏԵՓԱՆԻՑ

Ի հարկէ, պէտք է ամեն բան (ֆրակի
գրանից թաշկինակ հանելով) նկատի ու-
նենաք (բերանը սրբում է):

ՍՈԼՈՄՈՆ ԼՈՒԿԵԱՆԻՑ

Անկասկած...

Սկսում է կահաց կամաց մթնել:

ԱԼԵՔՍԻՑ ՍՏԵՓԱՆԻՉ

Մենք պէտք է այնպէս անենք, որ եթէ յանկարձ Աստուած մի արասցէ, եհ, մարդենք, պէտք է ամեն բան առաջուց մտածենք, ով գիտէ, կարող է պատահել, որ նտւթակին կրիզեսը դեռ երկար ժամանակ շարունակուի...

ԱԻԵՏ ԱԻԵՏԻՉ

Ենէ մաղբուն կուլիմ, էլի:

ԱԴԱՄ ՄԱԹ-ՎԵՒ

Ախր բանը կրիզեսը չէ, է. բանն էն է, փուր էսքան ժամանակ փորում ին ու փորում, համա փուր փուչինչ չի գուրս գալի:

ԱԼԵՔՍԻՑ ՍՏԵՓԱՆԻՉ

(Թաթոս հիլանիչին եւ Աղամ Մաթվէիչին) Վաղը առաւօտեան անպատճառ ճանապարհ կը ընկնէք:

ՍՈԼՈՄՈՆ ԼՈՒԿԱՆԻՉ

Ուրեմն արդէն վճռուած է:

ԱԻԵՏ ԱԻԵՏԻՉ

Դուք գիղեք էլի, փունց որ կու իսոսիք:

ԱԴԱՄ ՄԱԹ-ՎԵՒ

Արխէին կաց:

ԱԻԵՏ ԱԻԵՏԻՉ

Աբա էլ ինչ ասիմ (զնում են դիմաց եւ

յետոյ դէպի ժախ կողմը շարունակում են մանապարհը), էնէնց արէք վուր մինք խալխի առաջ ամութով չը մնանք:

ԹԱԹ-ՈՍ ԻՎԱՆԻՉ

Դուն արխէին կաց, արխէին:

ԱԻԵՏ ԱԻԵՏԻՉ

Թէ վուր միր բանը էսէնց գնայ ու մէ շարա չըլի, կորած ինք. մէ տարի չի անցկենայ ու սաղ քաղաքը մաղբուն կուլի:

ԱԼԵՔՍԻՑ ՍՏԵՓԱՆԻՉ

Դուք պէտք է հասկացնէք, որ ուղարկուած էք ընկերութեան կողմից...

Հեռանում են ամենքը. կարծ ժամանակից յետոյ Զետ Ամետիչը վերադառնում է եւ տխուր նատում է սեղանի մօտ ու քաժակները մի կողմ քաշելով՝ սկսում է սեղանի վրայ թափած թղթենրը մէկ մէկ նայել. մի քանի վայրկեանից յետոյ զանգահարում է, աղախինը զալիս է:

ԱԻԵՏ ԱԻԵՏԻՉ

Գնա լամպը վառ իր:

ՄԱՐԹ-Ա

Պէտք է պարապէք:

ԱԻԵՏ ԱԻԵՏԻՉ

Հա, գնա, վառիր:

ՄԱՐԹԱ

Այս ըոպէիս (մտնում է տուն):

Կարծ ժամանակից յետոյ պատուհաններից եւ դռնից երեւում է լուսաւորութիւն:

ԱԻԵՏ ԱԻԵՏԻԶ

(Քրպանից հանելով ժամացոյցը) **Ութինքիչ պակաս է:**

ՄԱՐԹԱ

(Դուրս է գալիս տնից) **Լամպը վառեցի:**

ԱԻԵՏ ԱԻԵՏԻԶ

Հա, լաւ (թղթերը հաւաքում է եւ մըտնում տուն):

ՄԱՐԹԱ

(Բաժակները հաւաքելով) **Մի քանի օրով թղթնում է քաղաքը, գալիս է այստեղ, որ հանգստանալ, բայց ի՞նչ հանգստութիւն. չեմ հասկանում սրա համար ի՞նչ դարձաւ անիծած փողը, գիշերներն անգամ չի կարողանում քնել, դուրս է գալիս և շարունակ քայլում. բոլորովին փոխուել է. անզետլ երեկոյ այգումը ածում էր երաժշտութիւն, Աննա Պետրովնան գնաց զբօսնելու, իսկ սա այստեղ մենակ քայլում էր և գլուխը ինքնիրան թափ տալի (բաժակները վերցնում է եւ մտնում է տուն):**

Փողոցով անցնում են երիտասարդների

եւ օրիորդների խմբեր. կարճ ժամանակ ըեմի վրայ ոչ ոք չի երեւում:

Չախ կողմից երեւում են նիկիտ Սերգէիչը եւ Լիւբա Աւետովնան, խօսելով մօտենում են նաւակին, որը կապած է ծառից:

ՆԻԿԻՏ ՍԵՐԳԻԿ

... Միթէ ես ձեզ կարող եմ մոռանալ, չէ որ մենք միմեանց նոր չենք ճանաչում. Լիւբա Աւետովնա, ի զուր, շատ ի զուր էք կասկածում. միթէ ես թոյլ կը տամ ինձ ալդ աստիճան ստորանալ... (նաւակը քաշելով անցնում են ծառերի ետեւ եւ խօսակցութիւնը անլսելի է դառնում):

Կարծ ժամանակից յետոյ նիկիտ Սերգէիչը եւ Լիւբա Աւետովնան երեւում են նաւակի մէջ նստած, որոնք կամաց կամաց կըկին անցնում են ծառերի ետեւ:

Տնից դուրս են գալիս Մանեան եւ ՕԼեան խօսելով:

ՕԼԵԱՆ

... Ես որ անցեալ օրը մտնում էի գահնիձ Ալէքսէլ Ստեփանիչը մալրիկի ձեռքը համբուրում էր:

ՄԱՆԵԱՆ

ՅԵՄՈՒ (հետաքրքրութեամբ):

ՕԼԵԱ

Յետոյ ինձ որ տեսաւ մալրիկի ձեռքը
թողեց և այնպէս կարմրեց, այնպէս կարմրեց,
ինչպէս եփած խեցգետին. իսկ դու ոչինչ չես
տեսել:

ՄԱՆԵԱ

(Կանգնելով սեղանի մօտ) Ինչպէս չէ,
ես քեզանից աւելի վաղուց եմ տեսել:

ՕԼԵԱ

Կարծես սիրահարուած են, չէ:

ՄԱՆԵԱ

Ես էլ արդպէս եմ կարծում:

ՕԼԵԱ

Համ:

ՄԱՆԵԱ

Ի հարկէ:

ՕԼԵԱ

Ուրեմն դու հետեւում ես:

ՄԱՆԵԱ

Ի հարկէ հետեւում եմ, գիտես ի՞նչ եմ
արել:

ՕԼԵԱ

Ի՞նչ:

ՄԱՆԵԱ

Ոչ ոք չի կարող մտածել թէ ես որչափ
խորամանկ եմ:

ՕԼԵԱ

Ի՞նչպէս:

Ես գահիճի դռան բանալիքը հանել եմ,
երբոր մալրիկը և Ալէքսէյ Ստեփանիչը մը-
նում են մենակ, ես բանալիքի ծակից նա-
յում եմ:

ՕԼԵԱ

Համ, ուրեմն դու բոլորը զիտես:

ՄԱՆԵԱ

Ի հարկէ գիտեմ:

ՕԼԵԱ

Դէհ, պատմիր:

ՄԱՆԵԱ

Ի՞նչ պատմեմ, միասին նստած շարու-
նակ, ամբողջ ժամերով խօսում են:

ՕԼԵԱ

Ի՞նչ են խօսում:

ՄԱՆԵԱ

Շատ, շատ, այնքան, այնքան բաներ
են խօսում, որ... (իողոցում եղեւուլ են աշա-
կերտների եւ աշակերտունիների իմբեր).
ահա նրանք գնում են այգին, մենք էլ
գնանք:

ՕԼԵԱ

(Ուրախացած) Ալ՛, գնանք (սկսում է
կանչել):

ՄԱՆԵԱ

Եկէք այստեղ:

Աշակերտները եւ աշակերտուհիները
զալիս են առաջ:

ՕԼԵԱ

Սպասեցէք, գլխարկներս վերցնենք և
գնանք միասին, հա:

ՄԱՆԵԱ

Ալս ըսպէիս գալիս ենք (Օլեան եւ Մա-
նեան շտապով մտնում են տուն):

Խմբից մի քանիսները մօտենում են
սեղանին, վերցնում են պակսիմատը. մօ-
տենում են եւ միւսները ու միմիանց ձեռ-
քից խլելով ուտում են:

ԱՃԱԿԵՐՏՈՒՀԻ

(Դառնալով աշակերտներից մէկին) Դու
այստեղ սպասիր, մենք կամաց կամաց կը
գնանք և դուք էլ կը հասնէք:

ԱՃԱԿԵՐՏՆԵՐ ԵՒ ԱՃԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ

(Խառն) Ալ՛, գնանք, գնանք, սպասելը
աւելորդ է...

Ամենքը զնում են բացի մէկից:

Կարծ ժամանակից յետոյ տնից դուրս
են զալիս Սանեան եւ Օլեան վիճելով:

ՄԱՆԵԱ

Ներողութիւն, ինձ աւելի է սիրում,
քան թէ քեզ:

ՕԼԵԱ

Իսկ ես կասեմ, որ ինձ աւելի է սիրում:

ՄԱՆԵԱ

(Դառնալով դէպի աշակերտը) Սպասիր,
դու սրան ես սիրում թէ ինձ:

ՕԼԵԱ

Ի հարկէ ինձ է սիրում:

ԱՃԱԿԵՐՏ

Օլեա, դու գիտես, որ ես քեզ ինչպէս
եմ սիրում:

ՄԱՆԵԱ

(Վիրաւորուած) Ուրեմն դու ինձ չեմ
սիրում, հա:

ԱՃԱԿԵՐՏ

Ի հարկէ քեզ էլ եմ սիրում:

Աշակերտի մի ձեռքը Մանեան է բռո-
նում, իսկ միւս ձեռքը Օլեան:

ԱՆՆԵԱ ԵՒ ՕԼԵԱ

(Միասին) Ուրեմն դու սիրում ես, մեզ
սիրում ես, համ, ուրեմն գնանք զբօսնելու
(վազ տալով զնում են):

ծովի վրայ երեւում է նաւակը՝ նիկիտ
Սերգէիչը եւ Հիւրա Աւետովնան մէջը նըս-
տած: Բաւականին մինում է, երկինքը կա-
պոյտ զոյն է ստանում եւ նաւակը երթեմն
ծառերի ետեն է անցնում, երթեմն երթեմն
էլ երեւում:

Զախ կողմից ծովի ափով երեւում են
Աննա Պետրովնան եւ Ալէքսէյ Ստեփանիչը:

ԱԼԷՔՍԻՅ ՍՏԵՓԱՆԻՅ

... Ո՞վ կարող է մեղադրել, ո՞վ կարող
է ասել ձեզ, որ դուք իրաւունք չունիք ապ-
րելու. այս, կը մեղադրեն ձեզ, բայց ովքեր,
միմիայն տգէտները և թերուսները, եթէ
դուք հետեւէք տգէտների կարծիքին, այն ժա-
մանակ...

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՎՆԱ

Այն ժամանակ ես ձեզ պէտք է... չեմ
համարձակում մինչև անգամ ասել...

ԱԼԷՔՍԻՅ ՍՏԵՓԱՆԻՅ

Խնդրեմ, խնդրեմ ասացէք:

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՎՆԱ

Այն ժամանակ ես ձեզ պէտք է վաղուց
վանդէի տանիցս...

ԱԼԷՔՍԻՅ ՍՏԵՓԱՆԻՅ

Նայեցէք ձեր շուրջը, նայեցէք և տե-
սէք թէ ինչ ազատութիւն են վաճելում ու
ըիշները:

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՎՆԱ

Երանի նրանց, որոնց վիճակուած է ապ-
րել ազատ:

ԱԼԷՔՍԻՅ ՍՏԵՓԱՆԻՅ

Կինը պէտք է կանգնած լինի իւր կոչ-
ման բարձրութեան վերայ և ոչ թէ ողորմե-
լի ստրուկ լինի...

Երաժշտութիւնը ուժեղանում է եւ խօ-
սակցութիւնը չի լսում, մի քանի վայրկեա-
նից յետոյ հասնում են բաց տարածութեան
ոկտում են կամաց կամաց մօտենալ ծովի
ափին եւ երաժշտութիւնն էլ մեղմանում է:

ԱԼԷՔՍԻՅ ՍՏԵՓԱՆԻՅ

Տեսէք որքան հրաշտի է ալժմ ծովի
վրայ, որքան դուրեկան, որքան քաղցր զգաց-
մունքներ է զարթեցնում...

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՎՆԱ

Այս, իսկ որ գեղեցիկ տեսարան է:

ԱԼԷՔՍԻՅ ՍՏԵՓԱՆԻՅ

Խնդրեմ ասացէք, ինչու համար ենք

ստեղծուած, ի՞նչու համար ենք ապրում, չե՞
որ այս բոլորը մեզ համար է և մենք պէտք
է օգտուենք... Գնանք փոքր ինչ առաջ...

Դանդաղ քայլերով մօտենում են ափին,
երաժշտութիւնը սկսում է ուժեղանալ. տը-
նից դուրս է զալիս Աւետ Աւետիչը, տխուր
քայլում է. քայլելու ժամանակ նայում է
ծովի կողմ եւ տեսնելով կնոջը Ալէքսէյ
Ստեփանիչի հետ՝ շփոթուած կանգնում է.
երաժշտութիւնը մեղմանում է եւ խօսակ-
ցութիւնը լսում է:

ԱՆՍԱ ՊԵՏՐՈՎՆԱԸ

Ա՛խ, որքան լաւ է, որքան օդը մա-
քուր... որքան դուրեկան հով է փչում այն
կապուտակ հօրիզոնից...

ԱԼՔԻՍԻՑ ՍՏԵՓԱՆԻՉ

Հիանալի է այժմ նաւակով զբօսնել ծովի
վրայ, մօտենալ այն կապուտակ երկնքին:

ԱՆՍԱ ՊԵՏՐՈՎՆԱԸ

Բայց որքան որ աշխատենք մօտենալ այն
կապուտակ երկնքին, այնքան հեռու, հեռու
կը փախչի...

ԱԻԵՏ ԱԻԵՏԻՉ

(Յուսահատուած երեսը ծածկելով ընկ-
նում է աթոռի վրայ) Կորած է հա, հա, հա

(Վ Ա Ր Ա Գ Ո Յ Թ Ր)

ՀԻՆԴԵՐՈՐԴԻ ԱՐԱՐՈՒԵՖ

Դահլիճ. նոյն կահարութիւնը ինչ որ առա-
ջին արարուածի մէջ դաշնամուրը քաց է եւ տես-
րակները թափուած են խառն ի խոտն. սեղա-
նի մօտ, ծախ կողմը կանգնած է Աննա Պետ-
րովնան, երեսը մի կողմ դարձրած, իսկ Աւետ
Աւետիչը յուզուած քայլում է. նկատելի է որ
սաստիկ կոռուել են:

ԱԻԵՏ ԱԻԵՏԻՉ

(Քայլելով) Ի՞նչ կօսին, Է...

ԱՆՍԱ ՊԵՏՐՈՎՆԱԸ

Ի՞նչ պէտք է ասեն. ամեն մարդ ազատ
երաւունք ունի ապրելու այնպէս, ինչպէտ-
ինքն է ցանկանում:

ԱԻԵՏ ԱԻԵՏԻՉ

(Կանգ առնելով) Ախր վիրջը... Օ՛հ Տէր
Աստուծ (սկսում է աւելի արագ քայլել):

ԱՆՍԱ ՊԵՏՐՈՎՆԱԸ

Ամբողջ տասնեութ տարի ապրել ենք
միասին, բայց ինչպէս:

ԱԻԵՏ ԱԻԵՏԻ

Առաջ ամեն բան լաւ էր, և 'երիք տարումը բնչ տեսար, է (ղիմելով ղէպի նախասենեակ): Օ՛, Ալեքսէլ Ստեփանիչ ... (ղուրս է զնում նախասենեակով):

ԱՆՍԱ ՊԵՏՐՈՎՆԱ

(Նստում է) ... Տասնեւութ տարի տպել ենք միասին (երեսը ծածկում է եւ մի քանի վայրկեան ընկնում մտածունքի մէջ) ... Բայց աչ, (յանկարծ վեր կենալով) ես ուզում եմ ապրել, ապրել եմ ուզում... (հատադ քայլերով մտնում է ճախակողմեան սենեակը):

ՄԱՐԹԱ

(Կարճ ժամանակից յետոյ, շփոթուած ղուրս զայնով ճախակողմեան սենեակից, ղիմում է ղէպի նախասենեակ) Ախ, Տէր Աստուած, տանն էլ ոչ ոք չը կայ. Ժամի 11-ն է. Լիւրա Աւետովնան էլ ուշացաւ (ղուրս է զնում նախասենեակով):

ԱՆՍԱ ՊԵՏՐՈՎՆԱ

(Նարճ ժամանակից յետոյ, վերարկուն հագին եւ զլիարկը ծածկած՝ ղուրս է զալիս սենեակից). Վերջը այս է. (մօտենալով պատուհանին) վաղ թէ ուշ, պէտք է այսպէս լինէր. (լսում է մօտեցող կառքի ձայն) ահա կառքը արգէն պատրաստ է (ղիմում է ղէպի նախասենեակ. յանկարծ կանգ է առնում եւ

ընկնում է կասկածի մէջ): Գուցէ և... Բայց ոչ, ես հաւատացած եմ որ նա ինձ սիրում է (ղուրս է զնում. մի քանի վայրկեանից յետոյ լսում է հեռացող կառքի ձայն):

ՄԱՐԹԱ

(Տիսուր մտնելով նախասենեակից) Ալ սօր առաւօտեան վիճակուած էր խեղճին (հաւաքելով տետրակները) վերջին անգամ նուագել (ղաշնամուրը փակում է, կարգի է ըներում բազկաթոռները եւ յետոյ անցնում է սեղանատուն):

Նախասենեակից մտնում են Լիւրա Աւետովնան եւ նիկիտ Սերգէիչը:

ՆԻԿԻՏ ՍԵՐԳԻԵՒ

Թող ուրիշները այս կեանքում քաղեն փուշ և տատասկ, որ միւս կեանքում հա՛, հա՛, հա՛, ստանան նոքա դափնեալ պսակ:

ԼԻՒՐԱ ԱԻԵՏՈՎՆԱ

(Դյիսարկը ղնելով աթոռի վրայ) Ստո՛ր, անխեղճ...

ՆԻԿԻՏ ՍԵՐԳԻԵՒ

Ալդ ամենը թուլ և ողորմելի մարդկանց համար է, որ յաղթուած ըսպէին մխիթարեն իրենց լոկ ալդ խօսքերով:

Լիւրա Աւետովնան նստում է յուսահատուած:

ՆԻԿԻՏ ՍԵՐԳԻԿԻՉ

(Մօտենալով) Ինչու վատնել, առանց
այն էլ մեր կարճ կեանքի թանգագին ժամերը:

ԼԻՒԲԱ ԱԻԵՏՈՎՆԱՆ

ՀԵՌՈՒ ինձանից:

ՆԻԿԻՏ ՍԵՐԳԻԿԻՉ

Հա՛, Հա՛, Հա՛, դուք ձեզ այնպէս էք ձե-
ռացնում, որ եթէ ալստեղ կողմնակի մարդ
լինի և տեսնի ձեր վարմունքը, բոլորովին չի
կարող երեակայել, որ դուք ձեր յսժար կամ-
քովն էիք ձեռքերը մեկնում, որ ես համբու-
րեմ, իսկ եթէ ձեր ալդ ցանկութիւնը պա-
տահաբար ձեզ աւելի հեռու տարաւ, ես մե-
զաւոր չեմ:

ԼԻՒԲԱ ԱԻԵՏՈՎՆԱՆ

Գուշ երդւում էիք...

ՆԻԿԻՏ ՍԵՐԳԻԿԻՉ

Գուցէ և այն ժամանակ սիրում էի:

ԼԻՒԲԱ ԱԻԵՏՈՎՆԱՆ

(Կանգնելով) Իսկ ալժմ միթէ փո-
խուելէմ:

ՆԻԿԻՏ ՍԵՐԳԻԿԻՉ

(Մօտենալով) Այս ձեռքերը (առնելով)
որ մի ժամանակ այնքան ինձ գրաւում էին
և հմապւրում, ալժմ ոչինչ է ինձ համար

(Նախասենեակից լսում է խօսակցութեան
ձայներ): Ալստեղ կողմնակի մարդիկ են գա-
լի, ուրեմն ց'տեսութիւն, ես գնամ...

ԼԻՒԲԱ ԱԻԵՏՈՎՆԱՆ

Ոչ, վաղ է գնալ, մենք դեռ խօսելիք
ունենք:

ՆԻԿԻՏ ՍԵՐԳԻԿԻՉ

Խօսելիք, ես բոլորովին աւելորդ եմ հա-
մարում լսելը:

ԼԻՒԲԱ ԱԻԵՏՈՎՆԱՆ

Իսկ այն ամենը ինչ որ կատարուել է
մեր մէջ:

ՆԻԿԻՏ ՍԵՐԳԻԿԻՉ

Ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի երեխայական
խաղ:

ԼԻՒԲԱ ԱԻԵՏՈՎՆԱՆ

Այդպէս:

ՆԻԿԻՏ ՍԵՐԳԻԿԻՉ

Դատարկ բան է, ժամանակի ընթացքում
ամեն ինչ կը մոռանաք:

ԼԻՒԲԱ ԱԻԵՏՈՎՆԱՆ

Ի՞նչպէս կարող եմ մոռանալ:

ՆԻԿԻՏ ՍԵՐԳԻԿԻՉ

Ես ասում եմ, որ մեր մէջ ամեն բան
վերջացած է:

ԱՐԻԲԱ ԱՒԵՏՈՎՆԱ

(Չեռքիցը բոնելով) Ո՛չ, դեռ վերջացած չէ (խօսակցութեան ճայները աւելի ուժեղանում են):

ՆԻԿԻՑ ՍԵՐԳԻՔԻՑ

(Նայելով նախասենակի կողմ) Վերջապէս ալստեղ կողմնակի մարդիկ են գալի:

ԱՐԻԲԱ ԱՒԵՏՈՎՆԱ

Ոչինչ, մենք սենեակներ շատ ունինք (առանձնասենեակի դոները բաց անելով) խնդրեմ, համեցէք, առաջին անգամ չէք գալի այստեղ, խնդրեմ (երկուսն էլ մտնում են ու դուռը փակում):

Խօսակցութեան ճայները աւելի ուժեղանում են եւ հետզհետէ քառերը լսելի են դառնում. նախասենեակում երեսում են Թաթոս իվանիչը, Աւետ Աւետիչը, Աղամ Մաթմէիչը եւ Սոլոմոն Լուկեանիչը:

ԹԱԹՈՍ ԻՎԱՆԻՑ

(Մանելով դահլիճ, միաներն էլ յետելիցը) Արա գուն խօմ գիտիս, ի՞նչ խասեաթի մարդ իմ, մինչև բանը քութահ չանէի, ի՞նչ իդ կու գալի Պետերբուրգից. ամեն Աստծու օր սահաթի չուրսին գնում էի մինիստրի մօտ շատ լաւ մարդ է էլի...

ՍՈԼՈՄՈՆ ԼՈՒԿԵԱՆԻՑ

Հասկացրիք որ գուք ուղարկուած էք ընկերութեան կողմից:

ԹԱԹՈՍ ԻՎԱՆԻՑ

Արա ինձ խօմ ճանչնում իս, ի՞նչ կու թողնէի՝ մինչև ամեն բանը չը հասկացնէի (Հպարտանալով). այ, կու տեսնիք, էրկու ամիս չի անցկենալ ու միը բանը գլուխ կու գայ: ամեն բան դիմ մէկ մէկ ասի, հիմի մինք պէտք է թուղթ գրինք մինիստրի անումով ու զրգինք Պետերբուրգ:

ԱՐԵՏ ԱՒԵՏԻՑ

Ալր մինիստրի հիդ գէմուդէմը խօսիլ իս, ոլրծիլ իս, էլ ի՞նչ թուղթ...

ԱԴԱՄ ՄԱԹՎԵԿԻՑ

(Թաթոս իվանիչին) Ի՞նչ իս ծուռն ու մուռը խօսում. էնպէս խօսի, վուը իմանան, հասկանան. սեկրետարը ուրիշ մարդ է. մինիստրը ուրիշ:

ՍՈԼՈՄՈՆ ԼՈՒԿԵԱՆԻՑ

(Թաթոս իվանիչին) Ուրեմն դուք մինիստրին չէք տեսել:

ԹԱԹՈՍ ԻՎԱՆԻՑ

Գուն էլ ի՞նչ իս սրան անգամ դնում (դառնում է դէպի Աղամ Մաթմէիչը): Ի՞նչ իս սարսաղ սարսաղ խօսում. էն մարդը ասում է, ամեն բանը իմ ձեռքին է, ասում է (ձեռքերը ետեւը դարսելով), վունց որ ուզենամ էնէնց կու սարքիմ կօսէ:

ԱԻԵՏ ԱԻԵՏԻ2

(Քայլելով) Տունս քանդեցի, դիմ մէտի
մաղբուն էլա (դառնալով դէպի Սոլոմոն
Հովկեանիչը) գուք էլ թամամ գժուացրիք,
հայ Փրանցուզնիրը, հայ փլանը, հայ փստանը
գալիս ին, օսկին տանում ին միր քնթի տա-
կեմէն ու մինք թամաշա ինք անում. էնքան
արիք վուր ինչ ունէի չունէի դիմ մէտի էն
անտէր բրիշակ էլած տիղը կորցրի...

Նախասենեակից մտնում է Մինասը:

ԱԻԵՏ ԱԻԵՏԻ2

Հը, ինչ է, գալու ժամանակ իս գթի.
խիղտեցէք, էլի:

ՄԻՒԱՍ

Ի՞նչ իս բղաւում, ճղաւում. Բագու գնա-
ցիր Փանտանիր տեսնելու, ու...

ՍՈԼՈՄՈՆ ԿՈՒԿԵԱՆԻ2

Է՛հ Մինաս, ինչ անենք, բարեկամ
մարդ ես, քիչ պէտք է համբերես, քիչ էլ
պէտք է եօլա տանես, ով կը մտածէր թէ
մեր վերցրած հողը անպէտք կը լինի ու այս-
պիսի քամբախտութիւն կը պատահի:

ՍԵՐԳԻՑ ՍԵՐԳԻԿ2

(Մտնելով նախասենեակից դառնում
է Մինասին) Եկիլ իս էստի մասլահաթ իս

անում, դէհ հազար մանէթս տուր, է, պէտք
է էսօր անպատճառ տաս:

ՄԻՒԱՍ

Աբա Աւետ Աւետիչ, ինչ իս ասում ախր:

ԱԻԵՏ ԱԻԵՏԻ2

Օհ, Տէր Աստուձ... (սկսում է քայլել)

ՍԵՐԳԻՑ ՍԵՐԳԻԿ2

(Աւետ Աւետիչին) Այ քիզ մարդ ասողին
ինչ ասիմ:

ԱԻԵՏ ԱԻԵՏԻ2

Էլ չիս սուս կենայ:

ՍԵՐԳԻՑ ՍԵՐԳԻԿ2

Հը, վունց է, վուր մինձ-մինձ ձեռում
էիր, լաւ էրկու վուտով ննգար թէ չէ:

Նախասենեակից մտնում են Մանեան
եւ Օլեան լաց լինելով:

ԱԻԵՏ ԱԻԵՏԻ2

Հը, ձիզ ինչ պատահից:

ՕԼԵԱ

Մայրիկին ճանապարհին տեսանք, համ-
բուրեց մեզ և ասաց որ չէ գալու և մեզ
այլես չէ տեսնելու:

ԱԻԵՏ ԱԻԵՏԻԶ

(Յուսահատուած) ՕՇ Ալեքսէլ Ստե-
փանիչ...

ՄԱՆԻԱ

Գնում էր կառքով...

ՆԻԿԻՑ ՍԵՐԳԻԵՎ

(Յանկարծ օրիորդի առանձնասենեա-
կից դուրս գալով՝ դիմում է նախասենեակ)
Ես ասում եմ որ մեր մէջ ամեն բան վեր-
ջացած է... (շտապով դուրս է գնում նախա-
սենեակով, ամենքը շիղթում են):

ԼԻՒԲ ԱԻԵՏՈՎՆԱ

(Դուրս վագելով առանձնասենեակից)
Հայրիկ (լաց լինելով ընկնում է հօր վզովը)
Ես կորած եմ, հա՛, հա՛, հա՛...

(Վ Ա Ր Ա Գ Ո Յ Թ Բ Ր)



Յուտով լոյս կը տեսնի
ՀԱՅԻ ԽՆԴԻՐ
դրամա 1 գործ. 4 պատկերով

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊԵԿ

Դիմել ԹԻՖԼԻՍԻ գրավաճառներին



19.527